ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
7	Մաքսային մարմնի արական սեռի հանրային ծառայողի ամենօրյա բաճկոններ Գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի՝ 20 հատ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի և գնդապետի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ամենօրյա բաճկոնը (Նկար 16) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է՝ ուղիղ ուրվագծով: Օձիքը՝ հետ ծալվող: Առաջամասում՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնի շղթայով, իսկ օձիքի մոտ և ներքևի հատվածում՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնի կոճգամներով կոճկվող: Կրծքամասի 2 կողմերում 14 սմ լայնությամբ և 14 սմ երկարությամբ, կպչուն ժապավենով ամրացող, 6 սմ լայնությամբ կափույրով միակողմանի ծավալուն վրադիր գրպաններ: Ձախ կողմի գրպանի վրա՝ տարբերանշան (Նկար 85): Գոտկատեղի երկու կողմերում՝ 45 աստիճան թեքությամբ, 17 սմ բացվածքով ներկարված միակողմանի ծավալուն գրպաններ՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Երկու թևերի վերևի հատվածում, ուսակարերից 9 սմ ներքև, 13 սմ լայնությամբ և 18 սմ երկարությամբ, կպչուն ժապավենով ամրացող, 6 սմ լայնությամբ կափույրով վրադիր գրպաններ: Ձախ թևի գրպանի վրա՝ թևքանշան (Նկար 84): Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի՝ եզրագծված իրար զուգահեռ ոսկեգույն զարդանախշով (Նկար 86): Գրպանների կափույրները՝ եզրակարված 2մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Բաճկոնի երկարությունը՝ 63-73 սմ (ըստ չափ/հասակի):

Բաճկոնի կտորը՝ ռիպստոպ տեսակի, 44 տոկոս բրդի, 54 տոկոս Պ/Է և 2 տոկոս լայկրայի խառնուրդ՝ 235 գր/քմ ±5% խտությամբ, աստառը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG)՝ պոլիէսթերի ատլասից, մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող ծոցագրպաններով: Փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի՝ 670 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների ամենօրյա բաճկոնը (Նկար 17) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է՝ ուղիղ ուրվագծով: Օձիքը՝ հետ ծալվող: Առաջամասում՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնի շղթայով, իսկ օձիքի մոտ և ներքևի հատվածում՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) գաղտնի կոճգամներով կոճկվող: Կրծքամասի 2 կողմերում 14 սմ լայնությամբ և 14 սմ երկարությամբ, կպչուն ժապավենով ամրացող, 6 սմ լայնությամբ կափույրով միակողմանի ծավալուն վրադիր գրպաններ: Ձախ կողմի գրպանի վրա՝ տարբերանշան (Նկար 85): Գոտկատեղի երկու կողմերում՝ 45 աստիճան թեքությամբ, 17 սմ բացվածքով ներկարված միակողմանի ծավալուն գրպաններ՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Երկու թևերի վերևի հատվածում, ուսակարերից 9 սմ ներքև, 13 սմ լայնությամբ և 18 սմ երկարությամբ, կպչուն ժապավենով ամրացող, 6 սմ լայնությամբ կափույրով վրադիր գրպաններ: Ձախ թևի գրպանի վրա՝ թևքանշան (Նկար 84): Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի: Գրպանների կափույրները՝ եզրակարված 2 մմ լայնությամբ կարմիր (գունային կոդը՝ #19-1557TPG) եզրաքուղով: Օձիքի միացման կարում մշակված է կախիչ, որի տակ՝ պիտակ (Նկար 87): Բաճկոնի երկարությունը՝ 63-73 սմ (ըստ չափ/հասակի): Բաճկոնի կտորը՝ ռիպստոպ տեսակի, 44 տոկոս բրդի, 54 տոկոս Պ/Է և 2 տոկոս լայկրայի խառնուրդ՝ 235 գր/քմ ±5% խտությամբ, աստառը՝ մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG)՝ պոլիէսթերի ատլասից, մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող ծոցագրպաններով: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: *** Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): **** 1-ից - 4-րդ, 6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: ***** 5-րդ և 12-րդ չափաբաժինները՝ կոշիկների յուրաքանչյուր զույգը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա

	պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: ****** Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ******* Յուրաքանչյուր ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է լինի առանձին պոլիէթիլենային փաթեթավորմամբ: ******** 1-ից – 4-րդ ,6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված չափաբաժինների համար Մատակարարը պետք է իր միջոցների հաշվին ներկայացնի Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, հավաստագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և աստառի բաղադրության վերաբերյալ եզրակացություն: ********* Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասանագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: ********** Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ********** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1980-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
7	